

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/4

9 հունիսի 2015 թ.

Քննարկվեց «Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամի 15.05.2015 թ-ի գանգատը ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացնելու հետևանքով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների դեմ:

**«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամի գանգատում բերված փաստարկները.**

«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամը (այսուհետ նաև Հիմնադրամ) իր գործունեությունը սկսել է ծավալել հանրակրթության ոլորտում 2013 թ-ից և չի հանդիսացել ԱԱՀ վճարող: 2014 թ-ի ընթացքում՝ համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1.1 կետի (օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով ԱԱՀ-ի շեմը գերազանցելու դրույթ) Հիմնադրամը համարվել է ԱԱՀ վճարող և ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկների փոխարեն ներկայացրել է ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ՝ կատարելով ամսական վճարումներ: 2015 թ-ի մարտ ամսին Հիմնադրամի կողմից ինքնուրույնաբար հայտնաբերվել է այդ վրիպակը, ինչը վերացվել է 2014 թ-ի համար ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու միջոցով: 2014 թ-ի համար ներկայացված թե՛ ամսական, թե՛ եռամսյակային հաշվարկներով վճարման ենթակա հարկային պարտավորության որևէ փոփոխություն տեղի չի ունեցել:

2015 թ-ի ապրիլի 14-ին Հիմնադրամը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ-ից վերցրել է տեղեկանք 21.01.2015 թվականի դրությամբ հարկային պարտավորությունների փոխադարձ հաշվարկների վերաբերյալ, որի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Կենտրոնի ՀՏ-ն՝ հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը, հաշվարկել է տուգանք 4.748.701 դրամի չափով:

Հիմնադրամը, ընդունելով հանդերձ, որ 2014 թ-ի հաշվետու ժամանակաշրջանի համար պետք է ներկայացնել ԱԱՀ-ի եռամսյակային և ոչ թե ամսական հաշվարկներ, խնդրում է հաշվի առնել, որ ըստ էության, ԱԱՀ-ի հաշվարկները ներկայացրել և ԱԱՀ-ի գումարները վճարել է ավելի հաճախ, քան նախատեսված է օրենքով:

Դրանով իսկ հիմնադրամը բովանդակային առումով կատարել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «գ» և «դ» կետերով նախատեսված իր պարտականությունները, որի արդյունքում պետությանը որևէ վնաս չի պատճառվել:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, Հիմնադրամը խնդրում է չձանրաբեռնել լրացուցիչ պարտավորություններով և անձնական հաշվի քարտում կատարել հմապատասխան փոփոխություններ՝ հանելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառության արդյունքում հաշվառված պարտավորությունները:

**«Հ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».**

«Հ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Նիստի ընթացքում Կենտրոնի ՀՏ ներկայացուցիչը նշեց, որ 2014 թ-ի ընթացքում «Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամի գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է ԱԱՀ-ի շեմը, որի հետևանքով 2014 թ-ի 3-րդ եռամսյակից Հիմնադրամը համարվել է ԱԱՀ վճարող: Արդյունքում, Հիմնադրամի կողմից ներկայացվել են ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ, այն դեպքում, երբ ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, պետք է ներկայացվեին ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ:

Տեղեկանալով կատարված սխալի վերաբերյալ Հիմնադրամը դիմում է ներկայացրել Կենտրոնի ՀՏ, որով խնդրել է ամսական հաշվարկները համարել չեղյալ՝ նշյալ ժամանակահատվածի համար ներկայացնելով ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացված լինելու պարագայում ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացվելը չի կարող դիտվել որպես նույն ժամանակահատվածի համար ճշգրտված հաշվարկների ներկայացում, ինչպես նաև ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15.1-րդ հոդվածի դրույթներով Կենտրոնի ՀՏ կողմից 2014 թ-ի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար Հիմնադրամի նկատմամբ հաշվարկվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը: Մասնավորապես, 3-րդ եռամսյակի համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքի գումարը կազմել է 2.264.287 դրամ, իսկ 4-րդ եռամսյակի համար՝ 2.474.093 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ Հիմնադրամի կողմից ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու պայմաններում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարների չափը չի փոփոխվել, այսինքն՝ դրա հետևանքով պետական բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել: Ընդհակառակը, ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու արդյունքում Հիմնադրամի կողմից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները կատարվել են սահմանված ժամկետից շուտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկի հաշվարկները Հիմնադրամի կողմից ամսական կտրվածքով ներկայացվել են թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ հիմնադրամի վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարվել են:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը եզրակացնում է, որ Հիմնադրամի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝**

«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամի գանգատը ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացնելու հետևանքով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների դեմ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**